

## Կորպորատիվ վաճառքների բաժնի ղեկավար

### Աշխատանքային պարտականությունները

- Ուսումնասիրում է ապահովագրական շուկան և ընտրում ապահովագրության վկայագրի գնորդին
- Ընկերության անունից ներկայացնում է ապահովագրության պայմանագրի կնքման վերաբերյալ առաջարկություններ
- Նախապատրաստում է տարբեր կազմակերպությունների կողմից հայտարարված մրցույթային փաթեթները
- Ապահովում է կորպորատիվ վաճառքների բաժնին հասցեագրված գրությունների գրավոր պատասխանները, ինչպես նաև կազմակերպում է տարբեր կազմակերպություններին և մարմիններին ուղղված համապատասխան գրությունների և առաջարկությունների նախագծերի կազմման աշխատանքները
- Կայացնում է օբյեկտի ապահովագրության ընդունման կամ մերժման մասին որոշում
- Ելնելով ընկերությունում գործող վերաապահովագրական քաղաքականությունից՝ անհրաժեշտ տեղեկատվություն է փոխանցում ընկերության վերաապահովագրության վարչություն
- Կազմակերպում և վերահսկում է իր ենթակայության տակ գտնվող մասնագետների աշխատանքները
- Ընկերության գլխավոր տնօրենին է ներկայացնում ռիսկերի վերլուծությունների գծով կատարած աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ
- Ընկերության գլխավոր տնօրենին է ներկայացնում կատարած աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ և դրանց արդյունքում ներկայացնում առաջարկություններ աշխատանքները խթանելու վերաբերյալ
- Իրականացնում է գլխավոր տնօրենի կամ վաճառքների գծով տնօրենի կողմից տրված այլ հանձնարարականներ

### Պահանջվող որակավորումը և հմտությունները

- Բարձրագույն տնտեսագիտական կրթություն
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձի առկայություն
- Ոլորտին վերաբերող օրենսդրության իմացություն («Ապահովագրության և ապահովագրական գործունեության» մասին ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք և այլն):
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ազատ հաղորդակցվելու ունակություն
- MS Office փաթեթի լավ իմացություն

### Անձնական հատկանիշներ և գործարար որակներ

- Նախաձեռնողականություն
- Թիմում աշխատելու և ղեկավարելու ունակություն

- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն
- Ներկայացուցչական և հաղորդակցման ունակություններ
- Բանակցություններ վարելու ունակություն
- Աշխատասիրություն և բարձր պատասխանատվության զգացում
- Վերլուծելու, արդյունավետ հաղորդակցվելու և խնդրահարույց իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն

### Հնտություններ

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են մինչև 23.02.2022թ-ն իրենց ինքնակենսագրականները (CV) ուղարկել [hr@armeniainsurance.am](mailto:hr@armeniainsurance.am) էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով թափուր հաստիքի անվանումը: